Սուրբ Եկեղեցւոյ վասն հրաց զօրագլխութեան եղիցի որպէս հատոր 24. նամակն որպէս Օրինակն։

ԳԼՈՒԽ ԻԷ.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս քսան և եօթն սեպհական յազգէն հայոց և աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ, վասն պաշտօնի որպէս 'ի վայր, և ըստ իւրաքանչիւրոք տացի նամակ պաշտօնատարութեան 'ի տանէն հայոց երիս ամաւ ժամանակաւ որպէս Օրինակն.

Այրս 3. 'ի պաշտօնն լրտես պետութեան առաջին, երկրորդ և երրորդ։

3. զինապետութեան . որպէս 'ի վեր։
3. վառհօդ պետութեան . » » »
3. կառապետութեան . . » » »
3. վրանապետութեան. . » » »
3. կերակրոյ պետութեան » » »
3. դանձապետութեան. . » » »
3. երկրաչափութեան . . » » »
3. պետ տկարաց և աղքատաց » » »

ԳԼՈՒԽ ԻԸ.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս վաթսուն, սեպհա-